

տարվայ գործունեութեան փորձից մենք համոզվեցանք, որ շատ սակաւ բացառութեամբ կը գրտնէք մի որ և է հայոց դպրոցում իր ուսումը աւարտած մի հայ կամ հայուհի, որ ոչ թէ միայն անտալ կերպով հայերէն գրէր, բայց ուղղադրութեան կողմից քիչ թէ շատ օրինաւոր կերպով տիրապետէր իր մայրենի լեզուն....

Երկրորդ՝ պէտք է պարզել ինչ է գրագիտութիւնն ասած բանը: Այժմէ գրագիտութիւնն ասելով մենք պէտք է հասկանանք կարգաւ ու գրել իմանալը, — այն ժամանակ մենք վիճելու առիթ չենք ունենայ մեր դպրոցների ուղեոված պաշտպանների դէմ: Բայց եթէ գրագիտութիւնը մենք են այնպէս գործողութիւն չէ միայն, այլ նրա մէջ պարունակվում է և մի բարոյական խորհուրդ, այն ժամանակ ամենակաշունչաւոր կերպով կարգաւ գրել իմացողին էլ մենք գեաւ ևս գրաւ գէտ, այդ բառի բուն նշանակութեամբ անուանել չենք կարող:

Ինչ նպատակ պէտք է ունենայ իւրաքանչիւր դպրոցը, թէ արական և թէ իգական, նրա նպատակը պէտք է լինի մի այնպիսի գործը բարոյական և մտաւոր զարկ տալ աշակերտին, որ մտաւոր կեանքի պահանջ չը գրգայողը ստանայ այդ մտաւոր պահանջը, որ դպրոցից դուրս գալուց յետոյ էլ աշակերտը շարունակի մտաւոր կեանքով ապրելու:

Բայց մեր բոլոր դպրոցներում գրագիտութիւնը մի մեքենայական, անշունչ գործողութիւն է միայն: Գրագէտ լինել, կը նշանակէ մեզանում կարգաւ գրել իմանալ, բայց ոչ պահանջ չը գալ կարգաւ և գրել: Գրագէտ դարձնել կը նշանակէ մեզանում կարգաւ գրել սովորեցնել, բայց ոչ թէ մարդու մէջ նրա ամբողջ կեանքի համար պահանջ չենցնել մտաւոր կեանքով ապրելու:

Ներսիսեան դպրոցից կամ Գայեանեան ուսումնարանից տւարտում են մի հայ երիտասարդ և մի հայ օրիորդ: Նրանք երկուսն էլ հայերէն կարգաւ գրել գիտեն: Բայց ուսումնարանէն և վկայականը գրաւանը դնելուց յետոյ, այդ երիտասարդը և այդ օրիորդը իրանց կեանքի ամբողջ ընթացում այլ ևս ոչինչ չեն կարգում, այլ ևս պահանջ չեն զգում որ և է մտաւոր կեանքով ապրելու: Այդ բաւական չէ, ուսումնարանը թողած, նրանք այլ ևս ոչինչ պահանջ չեն զգում իրանց մայրենի լեզուով խօսելու, այլ շարունակում են իրանց ամբողջ կեանքը օտար լեզուով խօսելու, որի հմտութիւնից նրանք մինչև անգամ այն օգուտն էլ չեն քաղում, որ կարգան այդ լեզուով հրատարակվող գրքերն ու լրագիրները:

Արեւմտ յայտնվում է որ դրոյր սովորեցրել է նրանց կարգաւ գրել ոչ թէ նրանց մտաւոր գոյութեանը փրկարար զարկ

տալու, մտաւոր կեանքի պահանջ նրանց մէջ ներշնչելու համար, այլ սովորեցրել է նրանց գրագիտութիւնը որպէս մի անշունչ, մեքենայական և կեանքի մէջ անգործագրելի մի գործողութիւն....

Այդ տեսակ դպրոցները համարվում են մեզանում ազգի բարոյական և մտաւոր վերածնելութեան գործիչներ....

Այդ դպրոցական այդ անշունչ, մեքենայական, անկենդան, անգործադրելի և աննպատակ գործունեութեան հետեանքն էլ ակնհայտ է մեզ համար:

Տաս տարվայ ընթացքում մենք տեսնում ենք որ իւրաքանչիւր տարի կովկասեան բազմաթիւ թէ իգական և թէ արական հայոց դպրոցներից անթիւ աշակերտուհիներ և աշակերտներ են դուրս գալիս, — բայց գրքի, լրագրի, ամսագրի կարդացողների թիւը դարձեալ մօտ չէ աւելանում....

Արեւմտ գրագիտութեան բառի լայն և բարձր նշանակութեամբ մեր դպրոցները մինչև անգամ գրագիտութիւնն էլ չեն տարածում, գրագէտ մարդիկ էլ չեն պատրաստում, քանի որ դրոյր սովորեցրել է մեզանում, աննպատակ գործողութիւն չէ, այլ գիտակցական, մտաւոր անընդհատ զարգացման, կենսական անհրաժեշտ պահանջ պէտք է լինի, որ միշտ կարօտ պէտք է լինի մտաւոր նոր և նոր անունդի: Արեւմտ ենք մեր հարցը. մի-

թէ այդ տեսակ դպրոցներ կարող են համարվել ազգի վերածնութեան միջոցներ.... կամ աւելի ճիշդ չէր լինի արդեօք նրանց գոյութիւնը անուանել ժամովաճառութիւն, իսկ մեր մանկավարժների գործողութիւնը աննպատակ ջուր մաղելը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱԲԵՆԻ ԼԻՍԵՐ

Թագաւոր կայսրը գեաւ չէ անցել Չմուշայն պալատը, այլ գեաւ կենում է Ամիւլիով տաճարաւոր մէջ, որտեղ կենում էր և Թագաւորացի կոյս ժամանակ. «Наше Время» նորը դուրս է որ Ամիւլիով պալատից նեապրանք թեղ են անցկացնում մինչև Չմուշայն պալատը:

Ապրիլի 17-ին, ինչպէս հաղորդում են լրագիրները, Թագաւոր կայսրին ներկայացան պատգամաւորութիւնները զմաստիւնից, բազմաթիւ, ազնականութիւններից և գիւղացիներից: Գիւղացիների պատգամաւորութիւնը ծնկադ ներկայացրեց Թագաւորին աղ և հաց: Թագաւորը ամենքին հարկաւորութիւն յայտնեց իրանց համարութեան համար:

«Моск. Телеграф» լրագիրը լսել է որ Թագաւորին ներկայանալու համար եկած յուրը պատգամաւորութիւններից լեւական պատգամաւորութեանը հրամայված է դարձեալ մի քանի ժամակ մնալ Ա. Պետերբուրգում:

Վարչապետի համալսարանի մէջ լեւական գրականութեան ցորթները նշանակվել է խնայակի:

Միւսիստների խորհուրդը շուտով քննելու է նպատակաւորութեանը տրվող ուսմանը անլաւանքը:

Լուր կայ որ գործի մի մասի օֆիցիւրներն թոյլ

— Լինայ գեաւ պալատը, ինչպէս վերջացրեց թէլը մեծ պարանի նեաւ ևս այսօր ժամանակ չունեցայ նրան տեսնելու:

— Եւ տեսնեցեալ, շատ լաւ է վերջացրել, պատասխանեց սպարապետը. — մի այնպիսի բան է նարեւ, որ կարողացել է մեծ պարանի համարութիւնը տեսնալ:

— Այսպիսի զեղքերում փոքր ինչ խորամանկութիւնը, իմ կարծիքով, ներքի է, ասաց իշխանը ձիադուրով. — ևս կարող եմ երեւակայել, թէ ինչ բան նարեւ կը լինի:

— Եւ յայտնել է մեծ պարանին, թէ դիտաւորութիւն ունի իշխանին ուսում գնալու, թէ այնտեղ մեծան պիտի երթնէ, ցանկանում է ներկայ գտնվել այդ հանգիստին: Եւ այս առիթով նպատակ ունի այցելել իր հայրենիքը, որից շատ տարիներ բաժանված է:

— Վատ չէ նարեւ, ասաց իշխանը շարունակելով իր ձիադուրը. — ուսումնասիրութիւնը անհրաժեշտ էր միշտ մեծ ազգեցութիւն է անում իսկ եթէ թէլը պարզ յայտնելու լինէր իր նպատակը, ինչ ևս կարծում, գուցէ մեծ պարանը իր կողմից կոչելէր նրան:

— Եւ միացնելի օգնութեան վրա գտաւորութիւն չունի: Եւ մեծ պարանը կախած լինելով պարտիկներից, գուցէ ինքը առաջինը կը լինէր, որ կը մտնէր նրան, պարտիկներին մի ծառայութիւն անելու համար:

— Եւստ հաւանական է, ասաց իշխանը, — գրանցից ամեն բան կարելի է սպասել: Իսկ այդ ուսումնասիրութեան պարտաւոր կապածի մէջ չի գցի մեծ պարանին:

— Զր կարծեմ, որովհետեւ թէլը վաղուց խառում էր այդ ուսումնասիրութեան մասին, իսկ մեծ պարանը միշտ յետ էր գցում: Առաջ նա սուրբ անդերի անունով դիտաւորութիւն ունի նախադրարդել Հայաստան, նրա գրութիւնը անձամբ նեապրանք և յետոյ սկսել գործը, իսկ այժմ հանգամանքները շտապեցրին նրան:

— Այդ երբ:

— Գեաւ մի տարի առաջ, երբ տակաւին Արեւմտ աշխարհից այդ նամակները չէին բաւազան:

— Զարմանալի ծածկամիտ մարդ է եղել այդ թէլը, ասաց իշխանը զուտը շարունակելով. — ևս մինչև այսօր հաւատացած էի, որ նա ինքնին ոչինչ գաղտնիք չունի, բայց հիմայ ուրիշ կերպ է դուրս գալիս: Մի տարի առաջ նա մտածում էր մի խորաւոր ուսումնասիրութեան վրա, իսկ ևս այդ մասին գեաւ ոչինչ չը գիտեմ:

— Գուցէ այժմ էլ ևս ևս գուշատ բաներ չը գիտենք, ինչ բաների մասին որ մտածում է նա, պատասխանեց սպարապետը ժպտելով. — բայց պէտք է հաւատանք, որ նրա վարժանքները, ինչ տեսակ և լինելն նրանք, անկեղծ են և գործի օգտին են ծառայում: Այս պատճառով, մենք նրանից խիստ պահանջող չը պիտի լինենք, և պիտի բաւականանանք այնքանով միայն, որքան որ նա հարկաւոր է համարում մեզ հաղորդել: Նրա ազնւութիւնը մեծ երաշխաւորութիւն է, որ նա չի խաբի մեզ. — կարծեմ գուշակ նեաւ կը համաձայնվեա, որ նա չափազանց ազնիւ մարդ է:

— Բոլորովին համաձայն եմ, պատասխանեց իշխանը. — նա աւելի ազնիւ է, որքան հարկաւոր է, որ մարդ լինի ազնիւ:

Բազմաթիւ մտածութիւնից յետոյ հարցրեց նա. — իսկ այդ պարանները ինչ անունով պիտի գան մեզ նեաւ:

— Դարձեալ ուսումնասիրութեան անունով, պատասխանեց սպարապետը. — իբրեւ հայ, էջմիածին գնալու համար, ոչ որ նրանց մասին կատար չի տանի: Բայցի գրանցից, մի ուրիշ բան կայ, այդ պարանները թէ ևս այստեղ գտնաւոր պաշտաններ ունեն, բայց բոլորն էլ գտնվում են թէլի հովանաւորութեան ներքոյ և կազմում են նրա թիկնապաշտերի խումբը: Այս մարդ թէլը շատ պատանաւոր ունի նրանց իր նեաւ տանելու:

Ի հարկէ, նա իր պատուի ու աստիճանի համար պիտի ունենայ իր թիկնապաշտերը, իր սովորած, և քառասուն մարդը շատ չէ նրա համար:

— Ի հարկէ, շատ չէ և ցանկացողները քառասուն մարդից աւել չեն լինի, ասաց իշխանը. — Բայց գուշակեմ, թէ ում յանձնվեցաւ թէլի պաշտանը:

— Արիւնք, միայն առժամանակեայ կառավարութեան համար, պատասխանեց սպարապետը. — Բայց պէտք է խոստովանած, որ թէլը այդ մի քանի տարվայ ընթացքում այնքան բարեկարգեց Վրաստանը, այնքան լաւ կարգի գցեց նրա խանդավառ գործերը, որ այսօրեւեակ շատ նեաւ է կառավարել նրան, միայն թէ կառավարիչները աշխատելն պահանջել այն, ինչ որ նա հիմնեց, Բայց ևս հաւատացած եմ, որ նրա բացակայութեան ժամանակ կրկին տան ինչ ապին ու վրա կը լինի:

— Իսկ ինչ կարգադրութիւններ արեց թէլը իր կառավարիչի և գիւղացի վերաբերութեամբ, հարցրեց իշխանը:

— Այնինչ, նա իր կառավարիչի մասին ամենին չի էլ մտածում, բոլորը թողնում է:

— Վատ չէր լինի, եթէ ծախէր, գուցէ փոքրը մեզ պէտք կը գային:

— Մի և նայնը ևս առաջարկեցի նրան, ասաց սպարապետը. — բայց նա ինչ պատասխանեց, թէ պատերազմի գործը պէտք է պատերազմով սրահանվի:

— Այսուամենայնիւ, սկզբում միջոցներ հարկաւոր են:

— Եթե խիստ փոքր միջոցներ հարկաւոր են գործը սկսելու համար, իսկ այդ միջոցները ունեւ եւս, ասում է թէլը. — Եւ իմ կարծիքով, նրա անձնավորութիւնը շատ ուղիղ է: Կառավարիչի վաճառելը կարող էր միայն կատար չարուցանել և փշաղնել այն ծրագիրը, որ կազմել է նա: Իսկ գործի սկսելու համար ևս էլ համաձայն եմ նրա նեաւ, որ մեծ միջոցներ պէտք

չեն: Արեւմտեայ մակեդոնացիները, Ամիւլի մարտերը, Չինգիս-խանները իրանց նեաւ գան չէին ման անում, այլ կերակրվում էին իրանց սրով:

— Բայց եթէ մենք չը գտնենք Հայաստանում այն նախապատրաստութիւնները, որ խառնում են մեզ Արեւմտ աշխարհից ստացված նախկներով, — այն ժամանակ, կարծեմ, բաժը կը դժուարանայ և փոքր միջոցներով մի նշանագործ կատարել անհնարին կը լինի, ասաց իշխանը:

— Եւս տեսիլ բան թէ գուշակ, սիրելի Բայեդուր, սովորած եմ թերահաւատութեամբ վերաբերիլ զեղի անանկեայ բախտի յաջողութիւնը, որ աստիճանեց սպարապետը. — իսկ այդ գործում համոզված եմ, եթէ Արեւմտ աշխարհում ոչինչ նախապատրաստութիւններ ևս չը լինեն, մի գործեալ կը յաջողվի: Դեռ քանի բաժը առէ ինչդ ստեղծի, թէ հայերի սրտում բուրբոն չէ անգամ հայրենասիրութեան կայծը, այլ անգամանքներից փոքր ինչ նեաւացած է միայն բաւական է փչել նրա վրա և իսկոյն կը բռնուրդի, կը բացվաւրդի.... Դրանք քո խաբի են: Իսկ բացվաւրդ, բորբոքել հայրենասիրութեան սրբազան հուրը մենք կարող ենք: Եւ այդ կը լինի գործի յաջողակ սկիզբը, իսկ վերջանքը Աստուծոյ ձեռքումն է: Եւ այնքան հաւատում եմ Հայաստանի աստղին, որքան հաւատում եմ, թէ կայ երկնքում մի արդար դատաւոր, որը վերջապէս կը լսէ Թագաւոր ձայնը և նրան ուժ ու զօրութիւն կը տայ փշաղն ամբարտաւան բռնակալի կզկիւրները:

Նրանք գեաւ երկուր խոսում էին և խորում էին միմեանց նեաւ, մինչև զարանցած նեաւերն աննակելի նեաւ լուսամտաններից վաղորդեան օրեկակի հառապայթեցրը: Այժմ միայն նախաջան, որ ողջ գիշերը լուսացրել են:

(Կը շարունակվի)

կը արդի ծառայութեան զորք հազար զորքա-
բան շարքեր հոգեպէս շատ քիչ որ զինուորա-
կան կանոնադրութիւնը կը վերաբերեն և աւելի
արդի ու հասարակ տեսք է լինի:

Մանկայի երաժշտական դպրոցը, կանաչա-
տաքի, Նիկիտայ Բուրմիստայի մանկ յետոյ,
գիտաւորութիւն ունի առաջարկել զինուորի
պաշտօնը նրա եղբոր, Անան Բուրմիստային:

«Навостный Купер» լրագրի № 60-ից ըս-
կան բանասիրական մասում տպուած է Բաբիկի
Հաւիթի թերթի վերջի ուսանելի թարգմանու-
թիւնը, որ բառական աղբյուր է թէ լեզուի և
թէ արեւելեան զարգացման ճիշդ արտայայ-
տութեան կողմից:

Արաքսայից մեզ գրում են որ այդ քաղա-
քում առաջնորդութիւնները որից որ քաղաքում
և ստանդարտ են, բայց առաջնորդից ոչ միւր
չէ կարողութիւնը Այս օրերս առաջնորդները
կարող են զինուորական քաղաքի մի նորուստ
մարդու տուն, բայց բարեբաղդար և կար-
գացան կողմից, որովհետեւ տան արդի որդին
այդ ժամանակ կրօնից տուն վերադառնալով,
պիտի լինի կանգնել և առաջնորդներ փոխան,
իւրանց նա մի անձնաւ տալ տանելով:

Վարդապետի մեզ գրում են: Այսօր
գտնուած են եւթ տուն հայ կաթողիկոսներ, որոնցից
թէ ոչ միւր ինքն չէ ստանում հայերէն թերթ,
բայց կարգում են «Մանկ» և մեծ համարու-
թեան են վերաբերում զեղի ձեր լրագրի քա-
ղաքի զարգացմանը այլ և այլ կրօնաբան մա-
սերի ազգային միութեան մասին: Այսօր ինչ
լուսաւորականների և հայ կաթողիկոսների մէջ չը
կայ տակաւնական զգացմանը. նրանք սիրով են
վերաբերում միմեանց մէջ, բայց ահա որ
մեր բանասիրներ փոխանակ աշխատելու բարո-
յական կայ հաստատելու երկու զանաւորութիւն-
ներն պատկանող ազգայինների մէջ, միայն
թղթաւորով են զբաղւած և թէ իրանց աւել
հրապարակ են հայ կաթողիկոսներին էլ, բայց միայն
զրա համար, որ թղթաւորով զարգանքն ինչ-
ների զբաղմունքը, քաղաքաւորի և գիտակցա-
կան կերպով կողմնակց են նրանց, կանաչ սեղանի
լուրջ նստած:

«Новое Время» հաղորդում է որ գրեթէ հա-
տատ է թէ Մանկայի ընդհանուր ուսուց ա-
րուեստագործական հանգիստ լինելու է 1882
թին:

Դատարան շատ քաղաքներից մեզ հեռա-
գրով և նամակներով շարահալութիւն են յայ-
տնում «Մանկ» № 44 մէջ տպուած «Հասարա-
կական հանգիստ» առաջնորդող յորուստի հա-
մար:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՏԱԼԻԱ

Համայն հաղորդում են հետեւեալ տեղե-
կութիւնները: Վերջին օրերի ընթացքում
ոչ թէ միայն Ռուսաստանի մէջ, այլ և ար-
տասահման օրինակ հարցերը յետ են քաշ-
վի մարտի 1-ի եղեւնագործութեան պատ-
ճառով: Այսօր թէ հասարակութեան,
թէ քաղաքական շրջանների և թէ պա-
լատի մէջ սարսափելի լուրը մեծ ազդեցու-
թիւն ունեցաւ, մանաւանդ որ խաղաղի
մէջ ստատիկ կերպով և արտայայտուած յիշա-
փական կուսակցութիւնների շարժումը:
Թէ կառավարութեան և թէ կառավարչու-
կան ձեռք փառ անդադար յարձակում են,
հանրապետական ցոյցներ բացարձակ են կու-
տարում: Խաղաղական մամուլի գրեթէ մի
կերպողական արձանագատ ուղղութեան է
գտնուում և զեռ ոչ որ չէ մոտացել այն
շարժումը, որ կատարւում էր խաղաղի
մէջ անցնելու ամառը և աշունը: Խաղաղա-
կան շարժում ամբողջ երկրի մէջ ժողով-
ներ էին կայանում, որոնց մէջ պաշտպան-
ւում էր ընդհանուր ձայնաւորութեան և

զանաւոր երբ Դարեւազի գնաց ջենովա,
քիչ էր մնում փողոցային արհեստակերպ
քիչ պատահելին: Վերջապէս հոգեւորական
ժողովուրդը պատեց Մենամայի մօտ ըս-
պանում հերաներին, նրանց արձան կանգ-
նեցնելով: Սոցիալիստներն էլ գաղտնի կեր-
պով շարժւում են և ձեռք են մեկնում հան-
րապետականներին: Այդ պատճառով Ռու-
սաստանի մէջ վերջին երեք տարիների ըն-
թացքում պատահող անցքերը, որոնք սար-
սափելի փոխան ունեցան, առանձին նշա-
նակութիւն ունեն խաղաղի համար և
կրկնապատկուած էին նրա ուղղութիւնը:
Ժողովրդական շարժումը ինչ ձե էլ նա ու-
նենայ և որտեղ էլ կատարվի ընդհանուր
եւրոպական շարժում է և ամենքին միատե-
սակ է վերաբերում: Ռուսաց Նիշնիյով
այդ շարժման շարժանքը արժանաւորան ար-
տայայտութիւնն է և այդ պատճառով Եւ-
րոպայի քաղաքական բոլոր կուսակցութիւն-
ները ուղղութիւն են զարմում: Ռուսաս-
տանի մէջ կատարվող զործերի փրաւ Այն
զաղտնիքները, որոնցով շրջապատված է
Նիշնիյովը, նրա իսկական ոյժերի և կա-
մակարդութեան մասին հաստատ տեղեկու-
թիւնների բացակայութիւնը, աւելի էլ ազ-
գում է երեւոյթութեան փրաւ:

Ժողովրդական շարժումը ամենանշանա-
ւոր հարց է ներկայացնում խաղաղի հա-
մար: Խաղաղների բառական զօւար զը-
րութեան մէջ են. մի կողմից վերջացաւ
պետութեան կազմակերպութեան ժամա-
նակաւորը և սկսեցաւ. Ժողովուրդի ըն-
դունում սահմանադրութեան սկզբունքների
մշակելը, միւս կողմից այժմեան պետական
կազմակերպութեան զեւ հանրապետական
ցոյցներ են կատարում, որոնք հեռու հե-
տաւորում են երկրի մէջ: «Մի է իմա-
նում, զուգէ իմ ապրուստը ստիպում էր
լինեմ կապիւ-շանտանների մէջ հայտնա-
թելը», հանաքով տակ է մի անգամ իտա-
լական իտալի հին երգեցողութեան իր ու-
սուցչին և այդ հանաքը նկարագրում է
պաշտօնի արժանաւորութիւնը, ցոյց տալով,
թէ որքան նշանաւոր է զործերի այժմեան
գրութիւնը: Այժմ խաղաղի մէջ շատ հե-
տաքերի ժամանակաւորը է անցնում:
Նա ստիպում է պարզել և ուսուցա-
սիրել շատ բան, որոնք մեր ժամանակակից
քաղաքական կեանքի մէջ կարող են օտա-
րոտի, անհասկանալի և ցաւալի թվել:

Խաղաղի Եւրոպայի նշանաւոր պետու-
թիւններից առաջինն է, որ անպայման
ընդունել է սահմանադրական կազմակեր-
պութիւնը: Փառն տարիների ընթացքում
միմեանց հակասող անտեսական շահեր և
քաղաքական փարպապետութիւններ խա-
ղաղի մէջ ծագել են, զարգացել և այ-
ժմ բաց են մնացած: Նրանց ազատ մը-
ցումը համաձայնութիւն կայացրեց, ար-
դէն սպառնալի նախագիծ է աշակերտ և
վերջին երկու տարիների ընթացքում պար-
լամենտը անդադար հաւանութիւն է տա-
լիս զանազան վերանորոգութիւններին: Պե-
տական անտեսութիւնը կարգի է բերված,
ոչնչացւած են մի քանի նշանաւոր հար-
կերի վարչական և ֆինանսական մի շարք
միջոցներ են գործադրված և այժմ իրանց
հերթին են պատուած քաղաքային և ըն-
դունական վերանորոգութիւնները, որոնք
պետք է ժամանակակից խաղաղի մէջ
անցնելու ամառը և աշունը: Խաղաղա-
կան շարժում ամբողջ երկրի մէջ ժողով-
ներ էին կայանում, որոնց մէջ պաշտպան-
ւում էր ընդհանուր ձայնաւորութեան և

ՊԵՐՍԻԱ

Երկրից հաղորդում են հետեւեալ տե-
ղեկութիւնները: Յայտնի է, որ կայսր Վի-
հելմի ցանկութեան համաձայն գերմանա-
կան ինքնագործակցութեան պետք է ուղեորդի
Ս. Պետերբուրգ ուսուց թաղաւորին ցաւա-
կութիւն յայտնելու և Հանգուցեալ կայսրի
իւղղման հանդիսին ներկայ գտնվելու հա-
մար: Վիզրից գերմանական կայսրական
տան անդամները, մանաւանդ կանայք ընդ-
գէմ էին այդ մտքին, աւելով, որ գերմա-
նական ինքնագործակցութեան և կայսրի միակ
որդուն փոխանաւոր է ուղարկել մի երկրի,
որտեղ քաղաքական սպանութիւններ են
կատարւում և անհոններ են փորում: Բայց
ձեռքերի կոտոր յայտնեց, որ ոչինչ փոխող
չը կայ և չը փոխել իր փոխը: Թաղաւոր-
ական իշխան Բիւսմարի հետ երկար տե-
սակցութիւն ունենալուց յետոյ պիտի ու-
ղեորդի ուսուց Մեծ իշխանների հետ Ս.
Պետերբուրգ, բայց նա յետաձգեց իր ծա-
նապարհորդութիւնը, որովհետեւ Պետեր-
բուրգից յուր ստացվեցաւ կայսրի ինքնա-
ուղեւորութեան մասին և որովհետեւ ինքնա-
ուղեւոր կամեւում էր ներկայ գտնվել իր
տան ընտանեկան անունին:

Թէպէտ լուրերն այդիցեան գերմանական
գեղատեսի միջնորդութեամբ յայտնեց գեր-
մանական կառավարութեանը, որ պետք է
զղոյշ լինել, որովհետեւ լուրերի և փար-
գի Նիշնիյանները մի նոր եղեւնագործու-
թիւն են պատրաստում, որ պետք է իր-
գործվի կայսրի ինքնաւոր, այնու ամե-
նային ինքնագործակցութեան ուղեորդի Պե-
տերբուրգ:

Երկրի մէջ նորեւում քաղաքական մի
նշանաւոր գործ կատարվեցաւ, որ անկառ-
կի կերպով անցաւ մինչև անգամ գերմա-
նայի մայրաքաղաքում, որովհետեւ ամե-
քի ուղեորդութիւնը զարմած է Պետեր-
բուրգի մէջ կատարված եղեւնագործու-
թեան փրաւ: Բայցառաջը համաձայնութիւն
տուեց կայսրական մի նոր միմիարութիւն
նշանակել առեւտրի և արդիւնագործութեան
համար: Այդպիսով կայսրական կառավա-
րութեան իշխանութիւնը աւելի էլ ընդար-
ձակվում է և ընդհանրաւոր առանձին պե-
տութիւնների անկախութիւնը սահմանա-
փակվում է: Բացի այդ կառավարութիւնը
շարունակում է բանակցութիւնները պարի
հետ և, ինչպէս երեւում է, փոխադարձ
զիջումներով համաձայնութիւն կը կայացն-
վի պապական կառավարութեան և գերմա-
նայի մէջ:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պերսիական իշխանը փառաշքեց սպա-
րական ազատութեան նոր օրէնքը, որ մշա-
կում է եղել սերիական ազգային ժողովից:
Համայն խաղաղական լրագրիցը հաղորդում
են, որ Դարեւազի մասնաւոր փրաւը է:
Հրանսիական ազգային ժողովի պաշտա-
ւոր Սե. Մարտին առաջարկեց ժողովի քննու-
թեան մի նոր օրէնք, որով կաթողիկէ քաղա-
ններն պիտի թոյլ տրվի անուանալ:
«Polit. Corresp.» լրագրի գրում են ի.
Պարիս: «Միջնաւոր Եւրոպան արեւելեան իշխ-
դի լուծելու բոլոր գործարարութիւնները տեսնում
է յաւանական խնդրի փոխելու մէջ, Բ. Դուր
շատ լաւ է հասկանում, որ իսկական փոխող
Թիւրքիայի պետական գոյութեանը սպառնում է
նրան ոչ թէ Եւրոպայում, այլ Թիւրքիայի ա-
րական նաւաներում: Լրագրիցը տաւ է որ
անդլական միմիարներից միւր նորեւում տակ
է. «Եւ փոխանում եմ, որ Պերսիան կը դառնայ
մի երկրորդ Եւրոպիա»: Չարմանալի է որ սըր
Հենրի Լայարը, Ի. Պարիսի գուրա գուրա մի
քանի ժամանակ առաջ գրում էր լուրջ Երեւոյթի-

ւին, որ «Հայաստանը անշուշտ դառնալու է մի
երկրորդ Եւրոպիա, որովհետեւ այդ երկրի մէջ
կատարվում են այնպիսի ինքնագործակցութեան, ինչպէս
մի ժամանակ Եւրոպայում էին կատարվում
և թիւրքերը դանդաղ են նշանակում այդ ին-
քնագործակցութեանը, որ կատարվեալուս
չինչ չեն անում նայելի իրաւացի պահանջներին
բառականութեան առջու համար»:

Պերսիական «Zürcher Zeitg.» լրագրիցը պա-
տասխանելով այն լրագրիներին, որոնք տաւ
են թէ Շվեյցարիան իսկական գոյութեան իրա-
ւունք չունի, տաւ է թէ Եւրոպան ձանաղել է
Շվեյցարիային, որպէս անկախ պետութիւն և
պահպանում է նրան որպէս անկախ պետութիւն
ընդհանուր համաձայնութեամբ: Թոյլ չը տա-
նան, աւելացնում է Պերսիական լրագրիցը որ 1848
թին, երբ Եւրոպան փորձեց սպանալ Շվեյ-
ցարիային, այդ սպանալիքների նշանակելն այն
եղաւ, որ նայն տարին ծագեցին յեղափոխական
շարժումներ փարպուս, Վիեննայում և Երկր-
նում:

Պերսիական պարլամենտի սոցիալ-դեմո-
կրատական կուսակցութիւնը պատրաստում է
մի մանիֆեստ, որով հանդիսաւոր կերպով նրա-
մարում է ուսու Նիշնիյանների նկատ ու է հա-
մարալութիւնը:

Լուրեր «Standard» լրագրիցը տակ է, որ
անգլիական կառավարութիւնը առաջարկութիւն
է տալու ուսու կառավարութեան կողմից գա-
տնականութիւնը լուրերում հրատարակվող «Freiheit»
սոցիալական լրագրի պ. Դուրա խնդրից, որ
տակ է ուսու կայսրի զեւ մի վերադարձնել
յորուստ:

Լուր կայ որ իշխան Բիւսմարի մի շրջա-
րակում նրա իրաւ է եւրոպական յուր ու-
րութիւնների համարալի կերպով գործել մի-
ջողպային յեղափոխութեան զեւ:

Վիեննայից լրագրիներին հեռագրում են
որ կան Անդրաշի նշանակվելու է արտաքին
գործերի միմիար Սաւարայում:

Վիեննայից հեռագրում են որ Աւստրիայի
կայսրը առաջարկել է ուսու զեւական կան Շու-
վարովին, երբ սա գալու է Վիեննա, ընտելի
կայսրական պալատի մէջ:

Երկրից «Post» լրագրին գրում են Համ-
բուրգից, որ այս օրերս այդ քաղաքի ուսուց
գիտնականական միմիար անգամ բարն Մեդ-
զէն տալու է մի յեղափոխական ժամանակա-
կից իր կեանքի զեւ ինչպիսիաներով թղ-
թեր, որոնցով յայտնում է բարն Մեդզզէնին,
թէ նա դատաւարարում է մահման: Այդ թղ-
թերը տղէն յանձնված են պրիւսիային և գա-
տաստանական ընտելութիւն է նշանակված:

Երկրից հեռագրական ընկերութեանը
հաղորդում են Նիւ-Կլետից, որ մարտի 16-ին
այդտեղ յուր նաւու Պիւլիպարտայից որ Սեդ-
լիայի և Բոլոնիի մէջ հաւանութեան պայմաններ
կապվեցան մի ծանր հակասաւորութեան յետոյ,
որի մէջ անգլիական զորքեր կորցրին 18 սպան-
ված և 90 վիրավորված մարդ: Երկրիցը յաղի-
տակեցին անգլիացիներին 3000 փամփուսներ
և երկու թնդանքներ:

Լուր կայ որ Բ. Դուրը անգլիական է գիշում
են անկախ եւրոպական գեղատեսիներն յաւա-
կան խնդրի վերաբերութեամբ:

«ՄԵՇԱԿԻ» ՀՆՈՒԱԿԻՐՆԵՐ

ՄԵՇԱԿԻ ԶԵՆԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի: Երեկ թաղա-
ւոր կայսրը ընդունելով խորհուրդի 25 ան-
գամներին, քաղաքապետից խաղաղաւորին
մի քանի սղորմած խօսքերով: Երեկ խո-
հուրդը երկու նշանաւոր առաջարկութիւն-
ներ ընդունեց և վճիռներ կայացրեց:
Հաղաւոր պատասխան ինքնագործակցութեան
մասին կը սկսվի մարտի 26-ին: Կերպով
նրանց հետ կը գտալի: Նա ստացաւ մե-
ղաքական ալ:

ՅՄԻՈՒՆԻԱ, 23 մարտի: Իսկա կղզու
փրա երկրաշարժը աւելեց քաղաքի երեք
քաղաք մարտի 20-ին զոհեր են զնալել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 մարտի: Պետական
բանկի 5% ամսական առաջին շրջանի ար-
ժէ 96 ռ. 50 կ., երկրորդ 93 ռ. 37 կ.,
երրորդ 93 ռ. 75 կ., չորրորդ 93 ռ. 25 կ.,
ներքին 5% ամսական փոխաւորութեան ամ-
սակը արժէ 224 ռ. 50 կ., երկրորդ 217
ռ., արեւելեան առաջին փոխաւորութեան
ամսակը արժէ 92 ռ. 62 կ., երկրորդ 92
ռ. 62 կ., երրորդ 92 ռ. 62 կ., արդի 7 ռ.
94 կ.: Ռուսաց 1 ռուբլ լուրերի փրա արժէ
24,75 պէն, Ամստերդամի փրա 125 պէն,
ուսաց 100 ռ. Համբուրգի փրա արժէ 211
մարկ, 12 պֆ., փարիզի փրա 261 ֆրանկ
75 ամսական Բորսայի արժանագրութիւնը
հանգիստ է:

Խնդրի—հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐՄԵՐՈՒՆԻ